թէև տկար և հիւանդ։ Պարսկաստանի ներքին քաղաքներէ մէկուն մէջ ողորմութիւն կը խնդրէր, մի հարուստ խանի դռնից արգիլեցին ներս մտնել, սպասել սպառնացան դռան մօտ, հաց առնել, ապա գնալ։ սակայն և նա երեսն պնդացոյց, քթի տակից քանի աղօթքներ մրմնջեց, ներս մտաւ, ուշադրութեամբ դիտեց, ինչ որ կը յուսար՝ չը տեսաւ. պարսկական շորերով մի կին տեսաւ, հասակը և շարժումը կը նմանէր իւր աղջկան, բայց ոչ դէմքը։ Քահանայի համար այս էս մեծ մխիթարութիւն մի էր, կուզէր երկար միջոց տեսնել։ Կինը քահանայն տեսածին պէս ասաց։

—Կարող ես մեր տան ջուր բերել, քո վարձքն կը հատուցանեմ։ Ծերունի քահանայն մի քանի կուժ ջուր բերաւ, այս կինը լաւ կերակրով քահանային փորը կըշտացոյց, երեք աւուր վերայ քահանայն առողջ էր. այս կնոջ ընթացք իրեն հաճելի եկաւ, տակաւ առ տակաւ կը նմանցնէր իւր աղջկան, սակայն կերկնչէր մի բան հարցնել. դուցէ կը մտածէր, ծանր հետևանք ունենայ։

Կինը խանից կը խնդրէ, որ այս ծերունին իւր ծառայութեան մէջ առնէ, խանը կնոջ խնդիրքը կը կատարէ։

Մի ամսոյ չափ քահանայն այս տունը կը ծառայէ, իրրև ջրբեր, յետոյ կը հարցնէ՝ ինչ ծառայութիւն կարող է անել. քահանայն հովուութիւն յանձն կառնէ. խանը իւր ոչխարաց հօտը նորա կը յանձնէ։

Ցերտէր որ աղօթք ասելու դժուարութիւն կը կրէր, այժմ լերան վերայ համարձակ աղօթք կանէր, ոչխարներն էս լաւ կը պահպանէր։

Նաև խղճին մեծ խայթ եղած էր, որ ինք քահանայ է և երկար ժամանակ պատարագ չէ արած, որով